ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ -3-Ե- 2167

« 17 » մարտի 2022թ.

ՅԱՍՈՆ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Տ. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար հաշվառման գրքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտում արձանագրվել է հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունը.

- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում (Հավելված 1.2) Հավելված 1.2-ին վերաբերող տեղեկատվության մեջ սխալ է նշված գնման ընթացակարգը՝ **«Էլեկտրոնային աճուրդի հրավերի»** բառերի փոխարեն նշված է «գնանշման հարցման հրավերի» բառերը:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11 կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **մարտի 18-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունը:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում Ձեր հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/07» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788